ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

Աղբիւրի յատկութիւնը

Ելոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 40 կիրակի 19 հոկտեմբերի | ութերորդ տարի 1897

ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստած մեծագիր փոտո-գլաւիւր պատկերը, 2) *Մայրիկի ևիջարանում*, մի շքեղ խրոմօ (սպառուած), 3) *Ոսկէ շղթաներում. կամ Հարևմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս *Պարիզի մոդաևներ*, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր *կամ* 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. *կամ* 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները ստանում է* Աղբիւր-Տարազ *միևևոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի:*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԵՐՈՒՍԱՂԷՄ. Երիոով խաչաթը եւ Մեռեալ ծովը.

ՀԱՅԹԱ — ՓԻՐԱՏ

(Տաճուրեւոդ դարի սկիզբներից մի անցք)

Ա

Հայթա—Ֆիրաս փաշա

—Յարմֆ, դու ստիպւած ես ամենայետին իսլամի մօտն անդամ ատել, մինչև շողոքորթութեան սահմանները մտնել, քանի որ քրիստոնեայ ես, բաբեկամ,—հեգնական ժպիտով ասում էր Հայթա-Ֆիրատն իր դէմ ծնրադրած Յակոբ աղային, ուռորակ բեխերն ոլորելով,—ես ինձ մի րոպէ երևակայում եմ քո պիրքով, չեմ պահում, սարսափում եմ, դու միշտ մահը ծոցդ առած՝ ինձ նման բռնակալների դռներն ես շրջում,—սարմֆ Յակոբ, փող,—ասում է բդեշխ Զիան,—սարաֆ փող, գոռում է բարեկամս ենիչէրի Ալտուլլահ փաշան,—դեաւուր, փող, սպառնադին ձեռը սրի պատապանին դրած՝ մռնչում է Դէլի Իբրահիմ փաշան.—դու ստիպւած ես, սարմֆ, այդ բոլոր քաղցած շներին կերակրել, ապա՝ մինչև իսկ դատողութիւնդ գաղելով, սևին սպիտակ, սպիտակին սև ասել. եթէ չ'ասես, եթէ չբռատես, եթէ չդատես նրանց հայեցակէտով՝ մի ակնթարթում կըտարածուիս ոտներին տակ արիւնաքամ եղած, փոխանակ կարեկցութեան՝ միայն ծիծաղ շարժելով:

—Ջեմ ժխտում ձեր վսեմութեան ասածը,—պատասխանեց սարաֆն երկիւղած դէմքով,—սակայն, թող ձեր վսեմութիւնն բարեհաճի իր նւաստ ծառայի խոնարհագոյն կարծիքն առնել, կարդալ նրա, ձեր հայեացքին անարժան, սրտի խորերում պրոշմւած այն բարձր զգացումը, անկեղծ հաւատարմութիւնը, որ տարածւում է ն. վսեմութիւն՝ Հայթա-Ֆիրատ — փաշայի գարշապարներին ներքոյ: Ձեր ծառան, էֆէնդիմ, անպայման հաւատարիմ է իր վսեմափայլ տիրոջ, իր մէջ չէ սնուցանում սարսափախառն երկիւղը քաջարի պետին ներկայանալու ժամանակ:

- Յարմֆ, ժպտալով ընդհատեց Հայթա-Ֆիրատ, ձեռն ոսկեզօծ սրի պատեանից չբհեռացնելով,—թէ որչափ անկեղծ են քո զգացմունքներն ինձ նկատմամբ, ապացուցւած են, նոր փորձերի կարիք չեմ զգում... բայց՝ ես ուզում էի քեզ ծանօթացնել քո սրտի սարսափի հետ, որից դու խոյս կըտաս, ինչպէս խոյս կըտայ մահմեդական կինն իր սիրած քաջի ուրւականներից: Մի'թէ, Յակոբ, դու չես լսում քո ազգակիցներին հասած վնասները. մանաւանդ նրանց եմ յիշում, որոնք միայն սուլթանին էին ծառայում կոյր հաւատարմութեամբ, մի'թէ մինչև այսօր չեն կոտորւում, կողոպտւում քեզ նման բարեմիտ մարդիկ մեզ պէս արիւնաւառ փաշաների ձեռօք, փաշանե'ր, որ սուլթաններն իրար ետևից կախելով չէ'ինէ/ն ուզարկում: Է'հ, Յակոբ, իրա՝ ես մահմեդական եմ... մեծ վէզիր եմ, տէրութեան խոշոր յենակէտերից միևն եմ, սակայն՝ չըգիտեմ ծածկել իմ զայրոյթը մեր իսլամների մի շարք ժառանգական տգեղութիւնների նկատմամբ. այս իսկ տեսակէտով՝ վեր արտաղրած իմ մէջ անհամար քստմնելի անցքեր՝ խօսում եմ...—Ի՞նչ ենք մենք,—Հալից կըտամ ինքս ինձ,—ինչ է օսմանեան կայսրութիւնը.—ազգերի վիժուկներով առոգացած, fաճքաnաtiեr (բորենի) մի հզօր մարդախանձ վոհմակ,—լսում եմ սրտիս խորքերից... Սուլթանը պաշտօն է ծախում մեծ քաֆթառների, նրանք էլ առանց լողճահարութեան, յօշոտում են կենդանի մարդկանց, կողոպտում, սպանում. կինն ու սրդին խլում են անզօրից՝ միայն այս պատճառով, որ զայիր-միսլիմ (ոչ մահմեդականն) են թշուառականները... Ջեն մտածում՝ թէ նրանք են մեզ կերակրում իրանց վար ու ցանքով, նրանք հագցնում մեզ իրանց ընտիր գործւածքներով, անկւածներով, նրանք հայթայթում ամենակարևորից մինչև ամենաչնչինին, մեզ անհրաժեշտ իրերը: Ֆիտնո, Յակոբ, ես կարդացած եմ մեր և ձեր ազգերի պատմութիւնները, սկսած Մահմէդի օրից մինչև ցայժմ այսպէս է եղել մահմեդականը ձեզ հետ և պիտի լինի:

—Այդ հանգամանքները քննել, վսեմս փայլ տէր, տրւած չէ հասարակ մահկանացուներին, եթէ իմ հզօր տէրս շօշափում է անլուծելի հարցեր, նորին վսեմութեան հարցասիրութիւնը գանում եմ կրօվի, փափուկ, զգայուն սրտի կարեկիր թրւիչքների մէջ:

Հայթա-Ֆիրատ կարծես շրկնեցաւ այս ոսկեզօծ շողոքորթութիւնից, ազնիւ մարդու նման գովեստից խոյս տալ ուզելով՝ չիպուղը դատարկեց, կլապիտոն անկւած ապայի (վերարկու) քղանցները ժողովեց ու շարունակեց.

—Անցնենք միւս կէտերին, սարմֆ. մեր կայսրութեան ապագան մռայլամած է, չեն կարող մեր խալիֆներն ինքնակամ գործել, շրջապատողները դէպի չարն առաջնորդելով վնասում են հասարակաց շահերին: Իսկ մենք՝ ենիչէրի, Դէլի, Հայթա մեր ուզած ձևի կաց ու նիստով, անկարգութիւններով, եսերով փչացնում ենք ամեն տեսակ արգասաւոր ձեռնարկութիւններ, խոզի նման ոչ միայն բերքն՝

այլև ծառի արմատներն ենք խլամատում, օրէնք, մարդկային խիղճ՝ ոտնատակ տւած, մեր բարձն ու անկողինն արիւնով ողողում... Մենք ժանտախոն ենք Ասիայի, եթէ մի հզօր ձեռք չ'ուղղէ մեր անել ուղին, մենք պիտի մեզ հետ ոչնչացնենք ենթակայ, ստորացած ազգերին... Ոտից ց'գլուխ շաղախւած ենք տղմի մէջ, ուրիշի արիւն-քրտինքը լափել ժառանգական իրաւունք տրւած է մեզ. ինքնոյն հին սովորութիւններով էլ մեծացնում ենք մեր որդիներին, երբէք բարեկոխութիւն, արդարութիւն, անհատական իրաւունք մուտք չըպիտի գործեն մեր ապերջանիկ երկրում, ուր օրը նոր, չարիքը նոր է՝ բայց՝ ոչ նորութիւն, ուր արշալուսից առաջ գալթնում են բռնակալների կրքերը:

—Երևի մի քանի գաւաթ աւելի կըլանել է մեր քաջ Հայթան,—մտածում էր սարաֆն՝ անթարթ փաշային նայելով,—այո, աչքերը, շարժումները, ձևերն յայտնում են այդ: Մաստիքան մարդասէր է շինել Փիրատին:

Հայթա փաշան տաքացած էր, մի քանի ժամ խօսելով նկարագրեց, պատկերացուց Տաճկաստանն իր կառավարութեամբ, կեղեքիչ զինուորականներով, մինչ դեռ սարաֆը մտածում էր նրա յայտնած մտքերի մասին, ինքն իրան հարց տալով,—կարո՞ղ է ղուռանի որդին այսքան մաքուր տեսնել,—մինթէ այս յանդուգն ախոյեանն երկաթապատ ասպարի տակ մարդասէր սիրտ, ազնիւ զգացումներ ունի: Չըլինի՞ թէ սրա արեան մէջ խառն են քրիստոնէական արեան կաթիլները, որ ազատ և անաչառ նշանակում է բոլոր Հակամարդկային անբարոյական գործերն ու կրքերը: Գուցէ այս վերջինը լինի... այո, նրա արտաքին երևոյթի վրայ անգամ կան հետքեր... Որ փաշան միայն մի կին առնելով է բաւականանում, այն էլ մի այնպիսի կին՝ որ ամուլ է, որ եօթ տարւայ ընթացքում որդեծնութեան յոյս յայտնած չէ: Մեծագրաւական չէ և նրա անժխտելի հայասիրութիւնը: Տարը տարին անցաւ, որ բնակւում է Կարնոյ մէջ, մինչև այսօր ոչ ոքին վնասած, ոչ մի վայրագ եղեռան հեղինակ չէ եղած: Ահալևուն պատերազմի՝ հեզ գառն է մեզ համար, մեծ-վեզիր գոլով, սիրում է ինձպէս, դեռ և ստոր աստիճան քրիստոնեան տեսնել իր մօտ նստած, խօսիլ միայն խղճի մասին:

(Կըջարուեցակի)

Ը Գ Ո Ի Ձ

Շուշիից

Ո՞ւր ես, վաղուան օր, ճոխ ցանկութեան.
Գանձի մէջ, կարիքի, վրեժի՞ թէ բերկրութեան:
Անցնում ենք կեանքի մրուայլ ուղիով,
Մենք fո ժպիտը իզուր փնտրելով.
Դու ւտւերի պէս փախչում ես մեզնից.
Եւ տրխուրթեան մէջ կրճանդիպենք ճորից
Նրան, որ փախչում էիք այսօր ճրանից...

Մ. ՄԻՍԱՔԵԱՆ

«ՕՐԻՆԱԿԵԼԻ ՋՈՅԸ»

(Պատմւածք՝ Գիւի դը Մոպասանից)

Այդ մի գեղեցիկ զոյգ էր: Ամուսինը ծառայում էր, առաւօտից մինչև երեկոյ Պարիզի կառավարչական սահան-ներից մէկում, կանոնաւոր ճշտապահ, վայելուչ, ինչպէս իսկական ծառայող: Նրան անւանում էին Լանտէն, 30-ամեայ հասակում նա ամուսնացաւ մի գեղեցիկ աղջկայ հետ, որը սնւած ու զարգացած էր մի բարձրբարոյական ընտանիքում: Ընկերները չնորհաւորում, բայց նախանձում էին նրա ընտրութեանը: Եւ իրենչպէս կարելի էր չընախանձել: Յովհաննան կանացի առաքինութեան կեն-դանի մարմնացումն էր ներկայացնում: Համեստ, խոնարհ, լաւ տանտիկին—նա իր ներկայութեամբ զարդարում էր ամուսնու կեանքը: Ինչպէսառասպելական յաւերժահարս, որ ընդունակ էր քարը մարգարիտ դարձնել, նա կարողանում էր իր ամուսնու աղքատիկ միջոցներով ստեղծել յարմար նիստուկացից էլ աւելի: Նրանց փոքրիկ բնակարանի սենեակներն զարդարած էին գեղեցիկ կահկարասիքով, որ նա կարողանում էր խիստ էժան գնել. ճաշին նրանց սեղանի վրայ դրւում էին հազւագիւտ ուտելեղէններ, և այնուամենայնիւ ոչ մի սուր պարտք: Յովհաննան երբէք, տնտեսութեանը յատկացրած փոլից, աւելի չէր պահանջում ամուսնուց: Հագնում էր նա մեծ ճաշակով, շքեղ պարզութեամբ: Նա սիրում էր թատրոն, օպերա: Բայց նրա ամուսինը, ուշ ուշ էր ուղեկցում նրան այնտեղ: Վերջերը, մինչև անգամ նա իր վրայից բոլորովին վերցրեց այդ քաղցր պարտականութիւնը և յանձնեց իր կնոջ ջահիլ ընկերներից մէկին: Որքան նա բախտաւոր էր, երբ կինը վերադառնում էր ուշ գիշերին՝ մի որևէ նոր պիէսի ներկայացումից միշտ զարդարւած, հոտաւէտ, թարմութեամբ ու գեղեցկութեամբ փայլելով: Նա այնպէս քնքշութեամբ փայփայում էր ամուսնուն, կարծես ցանկանում էր վարձատրել նրանից հեռու անցկացրած ժամերի փոխարէն: Նա մի աննշան սլակատութիւն ունէր—սաստիկ սիրում էր կեղծ ադամանդներ: Տեսնելով նրա սպիտակ պարանոցի և վարդագոյն ականջների վրայ շինծու քարեր, ամուսինը յաճախ յանդիմանում էր նրան,

«ՄԱՐԳԱՐԷ» կամ «ՑՈՎՆԱՆ ԼԷՑԴԷՆ» օպերա 5 գործ. 9 պատ. երաժշ. Մէյերբերի. Թիֆլիսի Ռուս. թատրոն. հունիսի 14-ին եւ 16-ին.

«Քեզ նման գեղեցկուհին չըպէտք է փչացնէ իր տպաւորութիւնը էժանագին ուրախութիւնների և բոժոժնեբի փայլով»։ Բայց նա այնպիսի սիրով ժպտում էր այդպիսի նկատողութիւնների ժամանակ և երեխայական վըշտացած հառաչանքով ասում էր. «Է՛հ, ինչ կարող եմ անել. ես աստւածացնում եմ այս չիմար բաները և ոյժ չունիմ նրանցից բաժանուելու։ Մի՛ անարգիլ ինձ և թոյլ տուր կրել նրանց»։

Այսպէս անցան նրանց ամուսնութեան վեց տարին, վեց լրիւ, փայլուն տարիներ. և ոչ մի ամպ չանցաւ, ոչ մի կուի ամենափոքր նշան անգամ։ Եւ նա սիրում էր կնոջը նոյնպիսի բուռն կերպով, ինչպէս մեղրամսին։ Բայց ահա մի անգամ Յովհաննան, օպերայից վերադարնալիս մրսեց, սկսեց հազալ և երկու շաբաթ-ւայ հիւանդութիւնից յետոյ մեռաւ։ Այրիացած ամուսինը անմխիթար էր։ Յովհաննայի մահով անցաւ նրա կեանքի յաջողութիւնն ու քաղցրութիւնը։ Նա տնտեսել ամենևին չըգիտէր։ Նրա ուռճիկը հազիւ էր բաւականացնում ամենասուղ, ամենաչքաւոր ապրուստի համար։ Ձուտով նա խրեց պարտքի մէջ և սկսեց մտածել, թէ ինչպէս փող ձեռք բերէ։ Նա քիչ քիչ ծախեց բոլոր իրեղէնները և չիշեց կնոջ կեղծ ադամանդներն ու մարգարիտները։ Այդ չնչին բաներից նա շատ ունէր և այդ բոլորը, ինչպէս և նրա կենդանութեան ժամանակ, թափած էին նրա սեղանի վրայ. կնոջ սիրոյ համար այդ սենեակը նա թողել էր նոյն գրութեամբ, ինչպէս կար նրա կենդանութեան ժամանակ։ Միայն ծայրայեղ կարիքը ստիպեց նրան դիպչել այդ սրբութեանը։ Նա վերցրեց մի մանեակ և մի զոյգ օղ և դրանց փոխարէն 8 կամ 10 ֆրանկ ստանալու յուսով նա ուղղուեց դէպի մօտակայ ակնավաճառը։

—Չի՞ք գնիլ արդեօք ինձանից այս չնչին իրերը։

Ակնավաճառը դիտեց զարդերը և չանկարծ զարթացաւ։ Նա բերեց խոշորացոյցը և երկար ուշադրութեամբ դիտում էր։ —«Ես ձեզ կարող եմ տալ այս չակինթների փոխարէն 15,000 ֆրանկ, բայց դուք պէտք է ապացոյց բերէք, որ այդ իրերը ճշմարիտ ձեզ են պատկանում։ Լանտէնը թուլացաւ «15,000 ֆրանկ» խօսքերը լսելիս։ Ի՞նչ է նշանակում այդ, հանո՞ւք է թէ... Նա դուրս փախաւ խանութից և գնաց թափառելու քաղաքի մէջ, աշխատելով պարզել այդ հանելուկը։ Առաւօտեան նա վճռեց գնալ մի չայտնի ակնագործի մօտ և իմանալ ճշմարտութիւնը։ Ակնագործը մանեակի և օղերի վրայ գցած հէնց առաջին հայեացքից ուրախ բացականչեց. «Այդ զարդերը մեզանից են առնւած. այո՛, ողորմած տէր, այս չտակ ջրի չակինթներ են, կարող եմ ձեզ հաւատացնել։ Օ, ես լաւ չիշում եմ մինչև անգամ այն տարին, երբ դրանք գնւեցին մի շատ սիրունիկ կնոջ համար»...— Ո՞ւմ համար. թոթովեց թշւառ ամուսինը խզւած ձայնով։ «Տիկին Լանտէնի համար։ Բայց դուք ուրմնից էք ստացել այդ բաները»։ Կարմրացած, ինչպէս եփած խեցգետին, Լանտէնն ասաց. — «Տիկին Լանտէնը իմ կինն էր, օրինական կինը։ Նա մեռաւ և դուք հասկանում էք որ...» —Ա՜խ, այո՛, դուք նրա ժառանգն էք։ Եւ ակնավաճառի աչքերը կիսածպղրական կիսաներողամտութեամբ պսպղացին։ Գործակատարները լիրբ հետաքրքրութեամբ դիտում էին այդ ամուսնուն»։

—«Ո՞րքան կըտաք ինձ այդ իրերի համա՞ր», վճռեց վերջապէս հարցնել Լանտէնը։

Յակինթները արժեն քսանհինգ հազար ֆրանկ, բայց ես կարող եմ վերցնել 18,000-ի, եթէ դուք կապացուցանէք, որ իսկապէս չիշեալ անձնաւորութեան ամուսինն էք»...

—«Ահա իմ այցետոմսը»։ Ակնավաճառի ուրախութիւնը սաստկացաւ։ «—Այո՛, այո՛, հէնց նոյնն է. հասցէն չիրաւի այս է»։ Նա ստուգեց գրքերում։ —«Դուք կարող էք ստանալ ձեր 18,000 ֆրանկը»։ Լանտէնը վերցրեց փողերը և նրանք չ'այրեցին նրա ձեռները։ Նա դուրս եկաւ կրպակից, բայց հէնց իսկոյն չետ դարձաւ մի բան չիշելով։ —«Ինձ մօտ՝ տանը շատ զարդեր կան այդ... հէնց միևնոյն աղբիւրից։ Չէք ցանկանում արդեօք բոլորը գնել»։ —«Ուրախութեամբ»։ —Ուրեմն ես վաղը կըբերեմ»։ Եւ ահա, հէնց միւս առաւօտը 12 ժամին նա շտապում էր ծանօթի կրպակը։ Նա բերեց իր հետ կնոջ բոլոր «չնչին իրերը»։ — Երևաց, որ նրանք արժեն 190,000 ֆր.։ Լանտէնի ձեռքերը մի քիչ դողացին, երբ նա համարում էր այդ լրիւ ստացած գումարը, բայց ոչ ամօթի խայտառակ զգացմունքից, ոչ այն վիրաւորական խոստովանութիւնից, որ նա խաբւել էր իր սիրած կնոջից։ Նա այժմ իրան հարուստ էր զգում և հպարտութեամբ բարձրացրած գլուխը՝ նա շրջում Պարիզի փողոցներում։ Ամեն ինչ նրան թւում էր մի նոր, հրապուրիչ աշխարհում։ Նա համարձակ ներս մտաւ ամենաշքեղ հիւրանոցներից մէկը և պահանջեց քսանուհինգ ֆրանկանոց ճաշ։ Տալչին նա անհոգութեամբ շպրտեց հինգ ֆրանկ։ Երեկոյեան նա այցելեց ամենափարթամ զարճասիրական հաստատութիւններից մէկը, որ նշանակւած է վէնեսայի ներկայ երկրպագուների համար և պեա երբէք իրան այնպէս առոյգ ու բախտաւոր չէր զգացել։

Չորս տարուց յետոյ, մինչև բաժակի տակը ճաշակելով ամեն տեսակ զւարճութիւններ ու հաճոյքներ, նա մտածեց նորից ամուսնանալ, վերադառնալ մաքուր ընտանեկան ուրախութիւնների գիրկը։ Բայց այս անգամ նա իրան օրինական կողակից ընտրեց մի հրեշտի — նրա կինը տգեղ էր, ինչպէս մահացու մեղքը և չար; ինչպէս դև։ Բայց այս կնոջ հետ նա գոնեա հանգիստ կարող էր լինել իր ամուսնական պատւի վերաբերմամբ։

Ե. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԸՐՋԿԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՐԾԻՆ

(Գաստիլ Մենդեսից)

—

Փոֆրիկ Հոգին

Այն ժամանակները, երբ ես գողութիւն էի անում մեծ ճանապարհների վրայ, մտքովս անգամ չէր անցնում այս քաղցրահնչիւն երգերը, որ այժմ շարադրում եմ։

Մի լուսնկայ գիշեր, ես տեսայ խոտի վրայ ընկած մի փոքրիկ, քնքոյշ հոգի, որ քնած էր մենակ, ճանապարհի մի կողմում։

Տեսնելով նրան, ես սկզբում շուռ տւի երեսս։

Ի՞նչ պիտի անեմ ես նրան: Նա իմ ինչքին է պէտք: Ես սպասում էի վերեզակին, որ արկղները լի ապրանքով պիտի անցնէր այդ տեղից և կամ ագարակատիրոջը, որ վերադառնալու էր տօնավաճառից, ուր նա կենդանիներ էր բերել վաճառելու: Ես սահմիկ քաղցած էի, ամբողջ երկու օր էր ոչինչ չէի կերել և անդուլ բերկրութեամբ կ'ընկնէի անցորդի վրայ: Եւ, եթէ նա սկսէր ընդդիմանալ պաշտպանելով իր անձը, ես այն ժամանակ կըխեղդէի նրան առանց մի րոպէ անգամ տատանուելու և խղճահարուելու, երազելով այն համեղ ընթրիքի ու հրաշալի գինու մասին, որ կարելի էր գտնել Հարևան պանդոկում, որի տէրը յայտնի էր իբրև աւազակների պահող-պահպանող: Սպանելով, ես ի հարկէ, չէի խղճահարուիլ և զղջալ, որովհետև քաղցած էի: Հարիւր անգամ ինձ պատահել է գողանալ, քսան անգամ ինձ պատահել է սպանել և իմ խիղճը մաքուր է եղել ինչպէս երեխայինը, խաղաղ, ինչպէս գայլինը: Ինչ վերաբերում է փոքրիկ հոգուն, որ վոտահ կերպով քնած էր ճանապարհի մի կողմում, նա ոչ մի կերպ օգտակար չ'եղաւ ինձ: Ես ցանկանում էի շարունակել իմ ճանապարհը, երբ, յանկարծ շուռ գալով, նկատեցի նրան և ինձ թւաց —այնքան նա պսպղում էր լուսնի շողքի տակ— որ նա ամբողջապէս զարդարուած էր ադամանդներով ու թանկագին քարերով: Ես երբէք այդպիսի հրաշալի ու թանկագին իրեր չէի տեսել: Վերջերքում միայն եսիմացայ, որ այդ թանկագին քարերը եղել են բանաստեղծական ոգեւորութիւն, իսկ այդ ադամանդները" փառ: Ես յարձակւեցի փոքրիկ հոգու վրայ և բռնեցի նրա կոկորդից: «Ա՜խ, մի խեղդիր ինձ,— բղաւեց նա յանկարծ արթնացած:— Բոլորը, ինչ կամենում ես կրտամ քեզ, միայն մի վնասիր ինձ: Ես մինչև անգամ կրտամ քեզ մի այլ ադամանդ, որ իմ վրայ չկայ, բայց իմ մէջն է,— նա ամենից մաքուր է, ամենից գեղեցիկ է,— նա իմ սէրս է: Դու միայն քնքոյշ եղիր դէպի ինձ,— այդ է միայն իմ խնդիրս քեզանից, — և դու կըտեսնես թէ ինչպէս կըշողշողայ ու կըփայլէ այն թանկագին քարը, որ ես պատրաստ եմ տալ նրան, ով կըխղճայ ինձ»: Բայց իմ ագահութիւնն այն աստիճան զօրեղ էր գրգռւած, որ ես չըկարողացայ ինձ զսպել: Ես խեղդեցի փոքրիկ հոգին և վեր առայ այն թանկագին իրերը, որոնցով նա պատռւճած էր:

Այն ժամանակից ի վեր ես հռչակաւած եմ մարդկանց մէջ: Ես հազիւ եմ յիշում, որ երբևիցէ գող եմ եղել մեծ ճանապարհի վրայ: Ընորհիւ այն բանաստեղծական ոգեւորութեան որ ես գողացայ, և այն փառին, որին տիրացայ, ես երգեր եմ երգում, որոնց մեծ հրճւանքով կրկնում է ամբոխը: Բայց և այնպէս խղճի խայթը, որ այն ժամանակ ինձ անծանօթ էր, երբ ես սպանում էի ու կողոպտում, յուզում է ինձ այժմ և չի տալիս մի րոպէ հանգիստ: Եւ ինչն է ինձ առաւել յուսահատեցնում և ստիպում տանջւել— եթէ ոչ այն գիտակցութիւնը, թէ ես չունիմ և երբէք էլ չըպիտի ունենամ սէր, այսինքն ադամանդներից այն ամենամաքուրը և ամենագեղեցիկը, որ փոքրիկ հոգին չունէր իր վրայ, և որը, սակայն նա կրտար ինձ, եթէ չըսպանէի նրան:

ՅԱՐ. ՄՂ.-ՅՈՎՀ.

ԱՌԱԳԱՍՏ

(Լերմոնտովից)

Միաւախլապատ ալէծածան
Ծովի խորքում կապուտակ
Օրօրւում է ձիւնանման
Առագաստը միայնակ:
Սակայն ինչ է նա որոնում
Այդ կողմերը հեռաւոր,
Ինչու՞ նա թողել գնում,
Հայրենիքը սրգաւոր:
Կուտակւում են ալիքները,
Խիստ սուլում է հէգ քամին:
Սղմւում է կայմը երեր
Եւ ճռնչում նա ուժգին:
Աւաղ, նա բախտ չէ որոնում
Նա բաւական վիճակից.
Եւ զայրացած նա չէ փախչում
Իրը դժգոհ իր բախտից:
Նըրա տակին փրփրում է
Անհուն ծովը կապուտակ.
Նըրա գլխին շողշողում է
Ոսկէծղին արեգակ,
Բայց նա մոլի, մոլի անվերջ
Փոթորիկ է որոնում,
Կարծես նոյն այդ փոթորկի մէջ
Անդորրութիւն է գտնում:

ՅՈՎՀ. ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

† Թագաւոր կայսր Ալէքսանդր III

(Մահուան երրորդ տարեդարձի առիթով)։

ՊԼՏՔ Ի ԼԵԶՈՒՆ ՄՇԱԿԵԼ

Ընցեալ անգամ «Դարձեալ լեզւի և ոճի մասին» յօդւածումս ակնարկեցի, թէ մեր նոր գրականական լեզուն պիտի մաքրել դռեհկաբանութիւնից և մանաւանդ թուրքերէն բառերից, որ մեծ թւով գործ են ածում մեզանում գլխաւորապէս ողովրդական գրողները։ Գաւառական բարբառների սիրահարները մոռանում են, որ չի կարելի անխտիր ամեն դարձւած կամ բառ ներմուծել գրականական լեզւի մէջ։

Յայտնի է, որ մենք չունենք մի ընդհանուր ժողովրդական բարբառ։ Թիֆլիսեցին խօսում է իր կիսավիրական բարբառով, ղարաբաղցին, երեւանցին կիսաթրքական բարբառով, իսկ ագուլեցիների բարբառը ոչ մի հայ չի հասկանում, բացի իրանցից։

Այս բաբելոնեան խառնակութեան մէջ բնական է, որ ամեն գրող ենթարկւի այն երկրի բարբառին, ուր ծնւել ու սնւել է։

Բայց պէտք է լինի մի ընդհանուր մասնաբ՝ որ բոլորը պիտի աչքի առջև ունենան գրելիս։ Միակ մասշտաբը, որով վերստուգւում է մեր ժողովրդական բարբառների ճշտութիւնը, իրաւացի համարւում է գրաբարը։ Բայց գրաբառը ստուգում է միայն լեզւաբանական ճշտութիւնը, առանց ազդելու ոճի ժամանակակից զարգացման վրայ։ Այն ինչ ոճը անհատական մտքի ու զգացումների այս կամ այն աստիճանի նրբութեան և մանաւանդ բնական ճաշակի արդիւնք է։

Եւ այստեղից ահա առաջանում է մի բաբելոնեան խառնակութիւն։ «Ոճը գրողն ինքն է», ասել է չգիտեմ ով. այս ճիշտ է։ Բայց ոճերի խառնակութեան մէջ ևս կարելի է գտնել որևէ ծատաւորական մասշտաբ և այնպէս հետամուտ լինել լեզւի գեղեցկութեան զարգացմանը։ Չի կարելի գործ ածել ամեն մի զռեհիկ դարձւած միայն նրա համար, որ նա ընդունւած է այս կամ այն ժողովրդի մէջ։ Այն գրողը, որ ժողովրդին ընդունում է ոճի գեղեցկութեան վերաբերմամբ աւտօրիտէտ, պարզ ապացուցանում է իր ճաշակի գռեհկութիւնը։ Գեղեցկի վերաբերմամբ անկրթ ամբոխը երբէք չի կարող աւտօրիտէտ լինել։ Եթէ մի Արարատեան գիւղացի գործ է ածում մի որևէ կոպիտ դարձւած, այդ չի նշանակում, թէ նոյն դարձւածը անմշակ պիտի մնայ գրւածի մէջ (ես խօսում եմ գեղեցիկ գրականութեան մասին)։

Ժողովրդական բարբառները պէտք է լինին մեզ համար լոկ հում նիւթ, ուրիշ ոչինչ, երբ նրանցից կամենում ենք օգտւել գրականական բարբառը հարստացնելու համար։ Ես դէմ եմ այն բանաստեղծական գրւածներին, ուր ոչ միայն գործող անձինք, այլև հեղինակը խօսում է ամբոխի, իր տեղական ժողովրդի լեզւով։ Հեղինակը, եթէ նա գեղեցիկ գրականութեան է ծառայում, պիտի գրի միմիայն գրականական բարբառով։ Նա կարող է իր հերոսներին խօսեցնել ժողովրդական բարբառով իրականութեանը հաւատարիմ լինելու համար։ Բայց այստեղ ևս նա պիտի աչքի առջև ունենայ ընդհանուր մասշտաբը և կուրօրէն չհետևի տեղական բարբառի բոլոր մանրամասն ձևերին։ Երևակայեցէք ձեզ մի վէպ կամ պօէմա, ուր բոլոր գործող անձինք՝ խօսում են Ագուլիսի բարբառով։ Այդ խօսակցութիւնները կարող են լինել շատ բնորոշ, ճշգրիտ, բայց ոչ գեղարւեստական, քանի որ անհասկանալի են։

Ինձ կարող են մատնացոյց անել մեր դրամատուրգ Սունդուկեանի պիեսները, որ գրւած լինելով Թիֆլիսի բարբառով, սակայն գեղարւեստական են։ Այո, այդ ճիշտ է։ Բայց ինձ թւում է, որ մեր յարգելի դրամատուրգի երկերի գեղեցկութիւնը մեծ մասամբ արտաքին է, այսինքն պարունակւում է նրանց բարբառի մէջ։ Թարգմանելով օտար լեզւի, նրանք մեծ մասամբ զրկւում են իրանց հրապոյրից։ Ով ռուսերէն կարդացել է Պէպօ, նա կարող է զարմանալ, որ այդ սքանչելի երկը որքան թուլացել է և կորցրել իր գեղեցկութիւնը, չընայելով, որ թարգմանութիւնը կատարւած է հմուտ ձեռքով։ Մի քանի տարի սրանից առաջ նոյն Պէպօն ներկայացրեց Կ. Պոլսում պոլսականի փոխադրւած։ Եւ մեր պոլսեցի հայրենակիցները չըգտան նրա մէջ այն գեղարւեստը, որ մենք ենք տեսնում։

Այսպէս է այն գրւածների վիճակը, որոնց հրապոյրը ամփոփւած է մեծ մասամբ տեղական բարբառի սահմանի սփակ շրջանում։ Եթէ պ. Սունդուկեանց կարողանար, խոյս տալով վիրականից, հետևել ընդհանուր ժողովրդականին, գրանով ոչ միայն կըզըրկէր իր երկերը գեղարւեստական նըրբութիւնից, այլև աւելի գեղարւեստական կըդարձնէր, աւելի ընդհանրացնելով երկերի հրապոյրը։

Եւ նրանց ներքին գեղեցկութեան, տիպերի ճշտութեան հետ թարգմանութեան մէջ կըպահէր և արտաքին գեղեցկութիւնը։ Թարգմանեցէք Տուրգենևի վէպերը գեղեցիկ հայերէնի, և նրանք կըպահպանեն թարգմանութեան մէջ իրանց ամբողջ գեղեցկութիւնը։ Թարգմանեցէք, դիցուք, Ուսպենսկու ժողովրդական բարբառով գրւածները, որքան յաջող ևս գիտէք թարգմանել, նրանք կըկորցնեն իրանց գեղեցկութեան մի նշանաւոր մասը։

Կամենում եմ ասել, որ գրողը, շատ էլ չըպիտի ոգևորւի ժողովրդական բարբառով, մանաւանդ հայ գրողը, որի առջև կան մէկի փոխարէն բազմաթիւ բարբառներ և որի գրւածը կարող է մի քաղաքում հասկացւել, միւսում ոչ։ Նա միշտ պիտի իր աչքի առջև ունենայ մի իդէալ։ Եւ այդ իդէալը պիտի լինի ոչ թէ իր տեղի, ժողովրդի կամ ազգի ճաշակը, այլ եթէ կարելի է այսպէս ասել, հանրամարդկային ճաշակը։ Կարելի է մի հերոսի խօսեցնել ճիշտ ժողովրդական լեզւով, բայց տալ նրան այնպիսի մտքեր, որոնք չեն համապատասխանում հերոսի ոչ մտաւոր աշխարհի մակերևոյթին և ոչ նրա զգացումներին։ Այս դէպքում կ'առաջանայ մի արտաքին խաբուսիկ գեղեցկութիւն, որ իսկոյն կըչքանայ, եթէ դէն ձգէք կեղևը, այսինքն բարբառը և վերցնէք էականը, այսինքն հերոսի հոգին և միտքը։ Հայ գրականութեան մէջ շատ կան այս տեսակ գրւածներ։ Գրւածներ, ուր գռեհիկ հերոսները խօսում են իրանց բարբառով, բայց ուրիշի մտքերով, այսինքն հեղինակի մտքերով։ Միամիտ

ընթերցողները այդպիսի գրաճները ռէալական են համարում։ Ես կարդացել եմ անգամ ժողովրդական հէքիաթների մի ժողովածու, որի ռէալականութիւնը բացառապէս իր բարբառի մէջ է կայանում։ Դործող անձինք խօսում են իրանց շրջանի լեզուով, սրտայայտում հեղինակի մտերը, կամը եր գաղափարներները։

Այս տեսակ գրաճները կեղծ են, հակագեղարուեստական, նոյն իսկ վնասակար, իսկ գրողները—տգէտ և անճաշակ։

Գրողը իրականութիւնը պիտի որոնի ոչ թէ իր նկարագրած հերոսների, տիպերի, բնաւորութիւնների և վերջապէս, շրջանի լեզուի մէջ, այլ հոգեկան աշխարհահայեցողութեան և զգացումների մէջ։ Կարելի է գրաճի մէջ նոյն իսկ ոչ մի խօսակցութիւն չըմըտցնել, այլ միայն պատմել և պատմել նոյն իսկ ամենաբարձր գրականական բարբառով, բայց աւելի հաւատարիմ մնալ իրականին, քան գործ ածելով բուն ժողովրդական լեզու։

Այսպէս, ուրեմն, ժողովրդական բարբառը պարտաւորական չէ գրողի համար նոյն, իսկ ժողովրդի կեանքից վերցրած նիւթերի մէջ։ Եւ ոչ միայն այս. պէտք է հետզհետէ լեզուն ազատել ժողովրդական բարբառների գռեհիկ ձևից օր օրի վրայ դարձնել զուտ գրական, օգտելով ժողովրդական բարբառներից իբրև միմիայն հում նիւթից։ Եւ այն գրողը, որ աչքի առջև չի ունենալ լեզուի մաքրութեան այս պահանջը, միշտ կըմնայ գռեհիկ։

Չ ի ր ա զ ա դ ե

Մատենախօսութիւն

ԽՍՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ. Ն. Տէր-Կարապետեանի, տպարան Շարաձի. 1897 թ. գինը 60 կ.

„Տասը չափի՛ր, մէկ կտրի՛ր“
Ազգ. առած.

Որքան էլ որ փոքրիկ ազգ ենք, որքան էլ մեր ոտքը դեռ նոր ենք դնում քաղաքակրթութեան սեմի վրայ, այնուամենայնիւ մենք էլ ունեցել ենք մեր սակաւաթիւ գործիչները—Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Պատկանեան, Րաֆֆի և այլք, որոնք ծնել են, գործել ու մեռել, բայց որոնց կեանքի ու գործունէութեան այս կամ այն պայմանների հետ մենք լիովին ծանօթ չենք։ Ոչ թէ միայն այդ չիշատակութեան արժանի գործիչների ամփոփ կենսագրութիւնը չունինք, այլև դրանց երկերի մասին կրետիկան իր վերջին վճիռը չէ արձակել։

Պ. Ն. Տէր-Կարապետեանը ուզում է այդ ուղղութեամբ մի քանի քայլ արած լինել մեր գրականութեան մէջ, տալով մեզ Խաչատուր Աբովեանի կենսագրութիւնը։

Ուրեմն պիտի խոստովանենք, որ պարոնի ընտրած նիւթը գեղեցիկ է ու նպատակայարմար, միայն թէ ծայրէ ծայր կարդալով այդ 138 մեծադիր էջերից բաղկացած աշխատութիւնը, ցաւօք տեսնում ենք, որ գեղեցիկ նիւթի մշակութեան գործը ըստանձնել է մի անձեռնհաս վարպետ։

Պ. Ն. Տ. Կ. առաջին տեղն այդ գրքում յատկացրել է իր կրքերին։ Կարդացէք Գէորգ IV-ն նէիրած տողերը, որ սկսւում են բուռն հայհոյանքով և եթէ մի փոքր խորն ես նայում, տեսնում ես հեղինակին ընկած կրքերի բուռն հոսանքի մէջ։

Բայց մենք կարծում ենք, որ պարոնի ակնարկած անկարգ մարդիկ, անճոռնի պատճառներ ու երախտաւոր սաները որքան էլ անդուռն բեռանով ու սանձարձակ լեզուով արատաւորած լինին հանգուցեալ կաթուղիկոսին, չեն կարող այնքան դատապարտելի համարւել, որքան ինքը՝ պ. Տէր - Կարապետեանը, որ Կաթողիկոսի անուան նէիրած տողերում, նրա յիշատակը ներկայացնող խաչի տակ թոյլ է տւել իրան իսկապէս անդուռն բեռանով հայհոյանք թափել։

Այնուամենայնիւ կարելի էր մատների արանքով նայել պարոնի այդ վարմունքին, եթէ իր աշխատասիրած գիրքը մի գնահատելի գործ լինէր։ Դժբախտաբար այդպէս էլ չէ. եթէ մի կողմ թողնենք այս ու այն տեղից հաւաքած և չակերտների մէջ առաջ բերած կտորները, որոնց վաւերականութեան մասին նոյնիսկ կարելի է վիճել, մնացածը մի հետաքրքիր գործ չէ ներկայացնում։

—

Խաչատուր Աբովեան գրքի կազմողը իր յառաջաբանում խոստանում է յիշել իր աղբիւրները։ Այդ ի հարկէ պահանջում է գրականութեան մէջ ընդունւած օրէնքը։ Հայց բանից հրևում է, որ պարոնը դիմում է և զանցառութեան օրէնքին, մի բան, որ շատ ձեռնտու է մի կարգ գրողների համար։ Օրինակ նա շատ տեղ բոլորովին լուռ է անցնում, շատ տեղ էլ ահագին էջերից յետոյ մի պարբերութեան տակ, որպէս աղբիւր, դնում է այս կամ այն անունը։

Կարդացէք ամբողջ եօթներորդ գլուխը, որ բաղկացած է երկու էջից և որի վերջում միայն գրած է Մսեր-մագիստրոսի ճառակից խօսքը։ Կարդացողը մնում է տարակուսանքի մէջ թէ ամբողջ գլուխը քաղած է Մսեր մագիստրոսի նամակից, թէ միայն վերջին պարբերութիւնը։ Մի բան որ շատ պարզ է, այդ այն է, որ այդ գլուխը իրան՝ պարոնի սեպհական բառերն ու ոճերն են և ոչ մագիստրոսինը։

Կարդացէք 33—82 էջը, որ վերաբերում է Խ. Աբովեանի Դորպատում անցրած կեանքին։ Իրաւ է որ հեղինակը տասն և մէկ էջ անցնելուց յետոյ մի թեթև ակնարկութիւնով հաւակացնում է, թէ ինքն առել է Աբովեանի ձեռագրների մէջ առաջ բերած կտորներից, մնացածը բոլորն էլ պատկանում են հեղինակի գրչին, նրա դատողութիւններն ու փիլիսոփայութիւններն, են իր մտքերի, քերականական ուղղագրութեան ոճերի հրէշաւոր սխալներով, որի մասին կըխօսենք յետոյ։

Նոյնը կարելի է ասել նաև ժ., ԺԱ. և ԺԲ. գլուխների մասին, որոնք, ի բացառեալ Խ. Աբովիանի և մի քանի այլ մարդկանց պատկանող կտորները, դարձեալ պ. Տ. Կ. գրչի արտադրութիւնն են։

Մենք կարող էինք ուրիշ շատ օրինակներ ցոյց տալ. բայց կարծում ենք, որ այդքանն էլ բաւական է ապացուցանելու, որ պարոնի խոստման և իրականութեան մէջ մեծ տարբերութիւն կայ։

Ուրիշ կէտերին անցնելուց առաջ չենք կարող մեր կասկածը չյայտնել մի քանի աղբիւրների վաւերականութեան մասին։ Օրինակ «Աբովեանի գործունէութիւնը Երևանում» գլխում պարոնը յիշում է Քանաքեռցուն (98 էջ) որպէս աղբիւր։ Կարծում ենք որ այն աղբիւրները, որտեղից քաղաած տեղեկութիւնները գրականութեան մէջ ահագին տեղ պիտի բռնեն, պէտք է անպայման վաւերական լինին։

Որքան մենք գիտենք, գրքի կազմողը Գեորգեան ճեմարանի շրջանաւարտներից մէկն է. եթէ այդպէս է, կարդալով նրա ստորագրութեամբ լոյս տեսած աշխատութիւնը, համարձակւում ենք ենթադրելու, որ կամ ճեմարանում գրել, կարդալ և մտքերը ճիշտ արտայայտել չեն սովրեցնում և կամ պարոնը իր հայերէնի մէջ ցոյց տաւ բոբիկութեամբ մի պարմանալի բացառութիւն է կազմում.

Առաջ բերենք մի քանի կտորներ.

Ջո անմահ գործերը բազմաց սրտերի հեռուտր անկիւններում (ուրեմն մօտաւորն էլ կայ) աննկուն արձանով է կենդանի (Գէորգ կաթ. անուան Նուիրած էջում)։

„Ծի դարը... իր ազդու ներգործութիւնն ունեցաւ եւ Հայաստան աշխարհի վրայ, կուսած Եւրոպայից, որտեղ գիտութիւնն ու ուսումը հսկայի քայլերին անգամ չէ հետզհետէ“ (էջ 1)։

„... որ դեռ 14 դար առաջ Հայաստանի սեպհականութիւն կազմել տին սուրբ Սահակ, Մեսրովբ և անմահ աշակերտները“ (էջ 2)։

„Կեղծ կլասիքական հոգին իշխում էր արևմուտքը Միրզա-Վանանդեցիներ, Բագրատունիներ տալով. իսկ արևելքը անանշան մարդիկ“ (էջ 3)։

„Վերջապէս այդ անելանելի դրութեան վանքը ժողովրդի հետ կապելու, գիտութիւնը ժողովրդի հետ հաշտեցնելու—Ռուսա-Հայաստանից կամուրջ ձգեց անմահ Խ. Աբովեանը“... (էջ 4)։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, գրքի առաջին թերթից սկսած իւրաքանչիւր մի էջից մի-մի օրինակ բերինք։ Այդ ձևով կարող էինք շարունակել մինչև գրքի վերջը, բայց դա զուր ժամավաճառութիւն կլինէր, քանի որ արդէն բերածն էլ բաւական է։

Այդ գիրքը զերծ չէ և քերականական սխալներից։ Օրինակի համար ես կըբացանեմ առաջին պատահած էջերը։

Ահա.

„Հետզհետէ ամոքւում է նրա սիրտը. ներքին թախիծն արդէն արտայայտել էր ճերմակ թևերի միջոցով“ (էջ 79)

„Աբովեանը թողեց էջմիածինը և... ուղեւորւեց Թորպատ, ուր եւրոպական կրթութիւնը... շունչ և ոգի են տալիս... ոգևորւած պատանուն“ (էջ 33)։

„Աբովեանը որքան ուրախ էր զգում... շրջապատողների մէջ, այնքան էլ տխուր, որ եղանակն անմրեւային էր, իրանց սայլն էլ ծածկած լինելով չի կարողանում չորս կողմը դիտել“ (էջ 33)։

„... շատ չէր յաճախում բարերարի մօտ... կինը պահած է և... պատւոյ կերակուր պատրաստող չկար“ (էջ 42)։

„Երբ նկատում էր, որ Աբովեանի սենեակի կահկարասիքը մի քիչ անկարգ էր դասաւորւած կամ... յատակն անմաքուր է, կըսէր էր իր աղախնին... (էջ 48)։

Իսկ ինչ վերաբերում է այլ սխալներին, բաւական է ասել, որ միմիայն Պարros յատուկ անունը գրած է հինգ տեսակ, օրինակ՝

Պարros (էջ 23, 33, 36, 40, 41...)։
Պարroդ (էջ 34), (գուցէ տպագրական լինի)։
Պարrns (էջ 23, 34)։
Բարros (էջ 29, 29, 32, 50...)։
Բարrns (էջ 22, 22, 35, 45...)։

Ապացուցանելու համար, թէ որքան կրկնութիւններ կան այդ գրքի մէջ, մենք ստիպւած պէտք է լինէինք նրա կէսն այստեղ արտագրելու, բայց որպէս զի մեր խօսք չերկարի, կըբաւականանք միմիայն նրանց մասին յիշելով։ Կրկնութիւնները հետևեալ կէտերի մէջ են.—Պարրօտը Աբովեանին զանազան մարդկանց հետ ծանօթացնելու, նրա գտած ընդունելութիւնների, տիկինների և օրիորդների տածած յարգանքի ու համակրութեան, ստացած նէրների, պատւոյ կերակուրների, նրա սուգ ու շիւանի (հայրենիքի ու ծնողների համար), թատրոն և այլ տեղեր յաճախելու, պրոֆէսօրների զանազան խոսստմանց, երաժշտութիւն սովորելու և վերջապէս շատ բաների մէջ, որոնցով խճողւած, թանձրացած է այդ գիրքը։

Խ. Աբովեանը իր յիշատակարանում գրել է ի հարկէ օրւայ տպաւորութիւնները և շատ հասկանալի է, որ կրկնութիւնները հետևանք են հէնց այն յիշատակարանում եղած կրկնութիւնների, բայց դա ամենևին չի ազատում հեղինակին պատասխանատուութիւնից, այլ ընդհակառակն աւելի լաւ ապացուցանում է, թէ գրքի կազմողը որքան անընդունակ է գտնւել։

Պ. Տ. Կ. իր յառաջաբանի մէջ ասում է, որ ինքն այդ գիրքը գրել է մրցանակիր (երեխի հասուցութեան վկայագիր է ուզում ասել) ստանալու համար... Որպէս աշակերտական գըրւածք, դպրոցական վարչութիւնը կարող էր գլխաւոր թերութիւնների վրայ ուշք չդարձնել և՝ մատների արանքից նայելով նոյն իսկ այլանդակ ոճերի, քերականական սխալների ու անհամ կրկնութիւնների վրայ, մրցանակագիր տալ, ինչպէս և տւել է անշուշտ, բայց նոյն այդ աշակերտական գրւածքի հրատարակելը, առնւազն ընթերցող հասարակութեանը բանի տեղ չդնել, նրան ծաղրել կընշանակի։

«Թէ արդեօք որ չափով եմ մշակել իմ աշխատութեանս առաջին մասը (?), որ այժմ համարձակութիւն ունիմ (համարձակւում եմ) հրապարակ դուրս բերելու (sic)—ես չեմ պաշտպանում»... ասում է նոյն յառաջաբանում, բայց պնդում է, որ աշխատել է սիստեմատիքաբար։

Իսկ մենք կասենք. իր ընտրած նիւթը դեղեցիկ լինելով հանդերձ, պարոնը պատրաստութիւն չի ունեցել նրան մշակելու և ոչ դոնէ սիստեմատիքաբար աշխատելու։ Մի բանում միայն արժանի է շնորհակալութեան, այն է որ ցրւած նիւթերից ու տեղեկութիւններից մի մասը հաւաքել է։

Արժէ, որ այդ նիւթը մշակւի մի աւելի ձեռնհաս անձի ձեռքով։ Եւ որքան շուտ, այնքան լաւ։ Ի՞նչու մեր մատաղ սերունդը իր ձեռքում չունենայ մեր նշանաւոր գործիչներից մէկի մշակւած ու լիակատար կենսագրութիւնը, թերևս ընթերցողների հարիւրից մի քանիսն օրինակ առնեն, ներշնչւեն նրա հոգով ու զաղափարներով։

Ի դէպ. Խաչատուր Աբովեանի արձանի համար ժողովւած մի գումար կայ։ Ժամանակն ենք հասատալ, թէ ներկայ պայմաններում կարելի լինի իրագործել այդ գեղեցիկ միտքը։ Ուրեմն աւելի լաւ չէր լինի, որ արձանի համար փող նւիրողները համա-

ձայնութիւն կայացնելով վճռէին նախ՝ պատրաստի եղած գումարի մի մասը որպէս մրցանակ յատկացնել այն անձին, որ կը ներկայացնէր Խաչատուր Աբովեանի լիակատար կենսագրութիւնը հանդերձ անհրաժեշտ ծանօթութիւններով և վաւերագրերով և երկրորդ՝ դրամի մնացած մասը գործադրել մրցանակի արժանացած աշխատութեան տպագրութեան վրայ։

Մ՛ըսէ դա աւելի լաւ սրճան չէր լինիլ այն մարդու չիշատակին, որի անունն անմահացնելն ամենքի սրտի բաղձանքն է։

Լուռ, անբարբառ քարեղէն արձանը չէ կարող սերունդների վրայ գործել այն ջերմ ազդեցութիւնը, որպիսի ջերմ ազդեցութիւն կը գործի պատմութիւնը։

Յուսանք թէ նւիրատուները անտարբեր չեն մնալ, իսկ մամուլը կը յայտնէ իր կարծիքն այս մասին։

Ա. Ց. Մ.

գեղարուեստ

Թատրոն. երաժշտութիւն եւ նկարչութիւն

—

Մարգարէ

Օպերա 5 գործ. 9 պատկ. երաժշտ. Մեյերբեերի.

Գերմանիայի և նրա հարևան աշխարհների գիւղերից շատերը ներկաւած են ճորտ գիւղացիների արիւնով։ XVI դարում մանաւանդ Գերմանիայի գեղջուկը, մարդկային ստորութեան լեղի բաժակը մինչև վերջին կաթիլը քամած, համբերութեան շղթաները, հնութեան պարիսպները փշրել սկսեց։ Իր դիակներից բլուրներ, ժայռեր բարձրացան, արեան յորդ առուներով ողողեց նրանց, մեջը բանալով անդունդներ, թաղեց իր բռնակալ, դաժան տէրերին։ Դեռ երեք դար չէ անցել այդ թշուառ օրերից, բայց նայեցէք, արեան այդ հեղեղները ինչպէս են պարարտացրել այդ երկիրը և որպիսի բուրմունք է սփռւել այդ վայրերում այսօր։

Կարճ ժամանակում ոչ միայն քաղաքակիրթ ազգերի շարքն ընկաւ Գերմանիան և իր հարևան երկիրները, այլ և այսօր նրանք յաղթանակ են տարել եւրոպական հին պետութիւնների առաջ, գիտութեան, արւեստի մէջ։

Մարգարէ օպերան XVI դարում յուսահատ գիւղացիների ապստամբութիւնը, բռնակալի դէմ դաւադրութիւնը և նրա կործանիլը, հերոսի մարգարէանալը, թագադրիլը ու մահը է պատկերացնում.

Մէյերբեր իրան յատուկ էֆէկտներով լի տեսարանները է տալիս Մարգարէ, կամ Լէյդենի Յովնան օպերայում, օր 9 պատկերով է և 5 գործողութիւն ունի։

Մարգարէ օպերայի դեկարասիօնները, ակսէսուարները գեղեցիկ են և ճոխ։ Արեգակի ծագումն ու ճառագայթները, պալատի խորտակիլը յաջող են։ Տեսարանները և պատկերները փոխւում են ակնթարթում. կատարեալ է իլիւզիան։ Անտրակտները կարճ են և չընայած 9 պատկերներին, ներկայացումը վերջանում է ժամը 12-ից առաջ։ Պէրէս մարգարէի դերում սիրուն է, հագուստը վայելուչ և շքեղ։ Տ. Ժուկովսկայա-Կարամզինա իր թանձր կոնտրալտոյով լաւ Ֆիդես է, խաղն էլ վատ չէ։ Բալէտը մի փոքրը կաղում է և եթէ խօրն էլ աւելի ջանք դնի, Մարգարէ օպերայի ներկայացումը ամենայաջողը կը լինի։ Այսօր երրորդ անգամ պրւում է այդ օպերան։

—

Չորեքշաբթի, հոկտեմբերի 15-ին Բագւում բացւեց հայոց թատրոնը Չոգով Աղհասեեր Պօտէխինի կոմեդիայով—պ. Ս. Չախումեանի թարգմանութեամբ։ Gala ներկայացումն անցաւ աջող։

Տ. Սիրանոյշ-Կոնդորեւա եւ պ. Պետրոսեան-Կարաբանով լաւ կատարեցին դերերը։

Չոգով աղհասեերի տիպերից շատ կան Բագւում, որքան Ալեգինեեր մանաւանդ...

—

Չինգշաբթի Թիֆ. ազնւականների թատրոնում հայ ներկայացումը յետաձգւեց։

—Թիֆ. արտիստիկ ընկ. սովորական չորեքշաբթիներ՝ երեկոյթներ և ներկայացումներ կըսկւին առաջիկայ շաբթւանից։ Կրուժոկի վարչութիւնը խնդրել է արտիստիկ ընկերութեան, որ նա իր թատերասէրներից կազմէ մի խումբ, որ իւրաքանչիւր հինգշաբթի Կրուժոկի անդամների համար ընտանեկան երեկոյթների սկզբում ներկայացումներ տայ։ Հետաքրքիր է, թէ ինչ է մտածում Թիֆ. պանդոկ դարձած ժողովարանը իր անդամների ընտանիքների համար, ինչ տեսակ զւարճութիւն պիտի առաջարկէ. արդեօք նոյն տաղտկալի երեկոյթները կը շարունակւին, թէ աւելի զւարթ և օգտակար երեկոյթներ կը կազմւին։

—

Այսօրւանվց սկսած արքունական թատրոնում իւրաքանչիւր կիւրակէ ցերեկով օպերային նեկայացումներ են տրւելու ժողովրդի համար, շատ էժանացրած գներով։ Այսօր կիւրակէ, ցերեկով երգելու են Դեւ օպերան։ Արտիստների ընկերութիւնը տոմսակների մի մասը իւրաքանչիւր կիրակէ ձրիաբար ուղարկելու է քաղաքիս զանազան դպրոցների չքաւոր աշակերտներին։ Խովում ենք արտիստների արտիստին վայել այդ կարգադրութիւնը։

Կովկասեան V-րդ պատկերահանդէս

—

Փառաց տաճարում բացւած Կովկասեան պատկերահանդէսը այս անգամ աչքի է ընկնում իր բազմազան նկարներով։ Մասնակցում են Թիֆլիսի նկարիչները և երկու հոգի էլ Պետերբուրգից։ Կովկասեան միւս քաղաքները բացակայում են։ Քարակտերիկ մի քանի նկարիչներ կան Կովկասի զանազան քաղաքներում, որոնց մասնակցութիւնն էլ քիչ հետաքրքրական չէր լինիլ։

Վերջին ժամանակներս կանայք և օրիորդներ շատ աջող նկարում են մետաքսի, վարիորի վրայ. նրանցից ցոյց չեն հանւած։ Հանդիսի կարգադրիչները պիտի իրանք խրախոյս հանդիսանային սրանց և հրապարակ հանէին նրանց գործերը։

Տեղական մամուլն էլ այս անգամ աւելի է ուշադրութեամբ լսօսում և քննում մեր նկարիչների գործերը, թէև նրանց մի քանիսի մէջ տենդենցիան է փայլում։

Քենադատներից մէկը պ. Բաբինջաղեանի տաղանդը չըկարողանալով ուրանալ, դարձեալ քարեր է շպրտում նրա հասցէին և օլէօգրաֆիաների նմանեցնում նրա պատկերները, սոլոակցիների սալոնների պահանջին յարմարեցրած։ Երբ տենդենցիան գեղարւեստի մէջ էլ շաղաղւում է և գեղեցիկը ստոր մտքերով համեմւում, այն ժամանակ նա կորցնում է թէ իր ոյժը և թէ ասողի ոչնչութիւնն է ապացուցանում։ Գաբաեւին համեմատում են Մակովսկու հետ։ Մենք պարոնի տաղանդը խոստովանողներից ենք, բայց շատ հեռու նրան շռայլելու գովեստներ, որպէս զի միւսին պալսարակենք։ Եւ վերջապէս նա այնքան քիչ նորութիւն է հանդէս դրել, որ պէտք է ընդհակառակ կըշտամբել նրան այդքան դանդաղ աշխատելուն և ծուլութեան համար և ոչ թէ չետին մտքերով, գովաբանել։

Այգեգործական բերքերի Կովկասեան առաջին ցուցահանդէսը

—

Ռուսաց կայսերական ընկ. նախաձեռնութեամբ հոկտեմբերի 15 ին բացւեց Մուշայիդ այգու շերամապահական կայարանում այգեգործական բերքերի առաջին ցուցահանդէսը։ Հացմանը ներկայ էին բարձրաստիճան անձինք. կատարւեց սովորական մաղթանք։ Ցուցահանդէսը կըտևի մինչև ամսոյս վերջը. մուտքը 20 կ. է, աշակերտների համար ձրի։ Բաց է առ. 10 ժ. մինչև 4-ը կէսօրից յետոյ։

Չինգ սենեակների մէջ են զետեղւած ցուցահանդիսի բերքերը. բերքեր, որոնցից մի քանիսը բոլորովին առընչութիւն չունին այգեգործութեան հետ։ Քաղաքիս մի երկու ծաղկավաճառները, իրանց խանութները տեղափոխել են այստեղ և բազար սարքել։ Զատ թեթև ձեռքով սկսւած գործ է, նման անցեալ տարւայ կաթնատնտեսական ցուցահանդիսին։ Կովկասեան այգեգործական բերքերի ցուցահանդէսը կարիկատուրային գործ է ներկայացնում։ Ձրկան հարուստ, բազմազան պտուղները և մրգեր։ Մարդ ապշում է, մի՛թէ Կովկասի կենդրոնում այս տեսակ հանդէս պիտի բացւի։ Բացակայ են Անդրկովկասեան բաքանչելի շատ այգիների բերքեր։

ԼՈՒՐԵՐ

—

Բարձրագոյն իշխանութիւնը իր վերջերս հրատարակած կանոնադրութեամբ թոյլատրում է հիմնել ընկերակցութիւններ, արդիւնաբերելու նպատակով։ Այդ ընկերակցութիւնները միահամուռ ոյժերով կարող են փոխադրութիւններ անել և բանակ ջրանցքներ, իրանց տնտեսական արդիւնքները ի վաճառ հանել և այլն։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը իր հոկտ. 13-ի կայացած նիստում համաձայն իրաւասու իշխան Գ. Թումանեանի առաջարկութեան՝ որոշեց ընտրել մի յանձնաժողով, որ Թիֆլիսում բարձրագոյն բազմարւեստական դպրոց (պոլիտեխնիկում) բանալու մասին աշխատէ։ Նոյն նիստում վճռւեց մերժել Վլադիկաւկազի խորհրդի առաջարկութիւնը նիւթապէս աջակցել յիշեալ քաղաքում նոյն տեսակի դպրոց բանալու գործին։

—

Nord-ը հաղորդում է. «Ձրնայելով պետութիւնների նկատողութիւններին և ստիպողական առաջարկութիւններին, որ Դուռը եռանդուն միջոցների ձեռնարկի նոր կոտորածների առաջն առնելու, Օսմանեան պետութիւնը շարունակում է անտարբեր մնալ։ Այդ պատճառով պետութիւնները հարկադրըրել են սուլթանի մինիստրներին նախազգուշացնել, որ մոլեռանդ բարբարոսութեան ամեն մի գործողութեան պատասխանատուութիւնը՝ մահմեդական ազգաբնակութեան կողմից՝ ամբողջապէս կընկնի Դրան վրայ, որն այս անգամ հարկադրւած կըլինի լըրջօրէն պատասխան տալ Եւրոպային»։

—

Նոյեմբեր 1-ից Կիևում հրատարակւելու է մի նոր շաբաթագիր Ռուսիա և Ասիա վերնագրով։ Նոր թերթը նւիրւած է լինելու ռուսաց քաղաքականութեան արևելքում, հրէական հարցին, օտարազգիներին, Կովկասին, Թուրքեստանին և Սիբիրին։ Նրա խմբագիր-հրատարակիչն է Կովկասին ոչ անյայտ Ա. Գրեճ, որը այժմ պրիւատ-դոցէնտ է Կիևի համալսարանում։ Այս օրերս լոյս տեսաւ այդ շաբաթագրի փորձնական համարը։

Թերթի նպատակը շատ համակրելի է, ինչպէս երևում է նրա առաջին առաջնորդողից։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդի դիմադրական կուսակցութիւնը բողոքել է նահանգական իշխանութեան պ. Գ. Եւանգուլեանին քաղաքագլուխ ընտրելու դէմ, համարելով այդ ընտրութիւնն անկանոն։

—

Թոյլատրւած է Աճալայի հաշտարանում հայերէն և վրացերէն լեզուներով ներկայացումներ տալ։

—

Ռուսաց յայտնի ամսագիր „Вест. Европы“-ի խմբագիր Ն. Ն. Ստասիւլևիչի գիտնական դրականական գործունէութեան յիսունամեայ յոբելեանը կըտօնւի առաջիկայ նոյեմբերի 16-ին։ Պետերբուրգն կայ հետեւալ օրն իսկ տօնել վիպասան Զլատովրացկու 25-ամեայ յոբելեանը։

—

Հազիւ լուր ստացւեց Թիֆլիսում, թէ Մանթաշեանի եւ ուրիշների նաւթահորերում սկսւած հրդեհը դադարել է, օճորիս Քոնցաննիներում բարերից եւ հողից գոյացած խցանի, հետագիր ստացւեց Բագւից, թէ Բիբի-Էյբաթում Նոբէլի նաւթահորում հրդեհ առաջացաւ, որի ժամանակ այրւեցին չորս նաւթահորեր եւ չորս էլ նաւթի պահեստներ։

—

Այս օրերս Թիֆլիսով անցաւ Բագու Թէհրան գնալու համար Վանի պարսկական նախկին փոխ-հիւպատոս Միրզա-Հուսէյին խան իր թարգման Սիմէոն խան Տէր-Յարութիւնեանի հետ։ Միրզա-Հուսէյին խանը 96 թւի կոտորածների ժամանակ Վանի հայերին անգնահատելի պատսպարութիւն է ցոյց տւել։

«Сынъ Отеч.» լրագիրը ի մէջի այլոց Մոսկւայում յօդուտ տառապեալ տաճկահայերի լոյս տեսած «Ընբայրական օգնութիւն» ժողովածուի մասին հետևեալն է ասում. «Ծանօթանալով այս երկերից (ժողովածուի) այն հոգեկան ոյժերի հետ, որ արտայայտել է տաղանդաւոր հայ ժողովուրդը իր բազմադարեան պատմութեան ընթացքում, ընթերցողը մեծ ուշադրութեամբ կը վերաբերւի ժողովածուի այն յօդուածներին, որոնց մէջ պարզ և ճշգրիտ գոյներով նկարագրւած է այն անպաշտպան հայերի սոսկալի վիճակը, որոնք ենթարկւած են մուսուլման ֆանատիկոսների անպատմելի քմահաճոյքի իշխանութեան»...

—

Հոկտեմբ. 14-ին Բագւում կայացաւ քաղաք. լրաւատուների ընտրութիւնը: Պէտք է ընտրէին 86 լրաւատու և 16 փոխանորդ: Սակայն ինտելլիգենցիան կրելով տատիկ անյաջողութիւն, շնորհիւ իր անտարբերութեան, ընտրեցինառաջին 35 լրաւատու, որոնցից 24 մահմեդական, մնացեալը քրիստոնեաներ (հայ, ուս և հրէա): Ընտրութիւնների շարունակութիւնը այսօր է նշանակւած:

——

Նամակ խմբագրութեան

Թիֆլիս, 13 հոկտեմբերի.

Խնդրում եմ «Տարազի» առաջիկայ համարում բարեհաճեք տեղ տալ հետեւեալ երկտողիս:

Մուրճ ամսագրի № 9-ում, էջ 1295, ասւած է թէ Ներսիսեան դպրեվոցի հոգաբարձութեան 4-ամեայ ծառայութեան ժամանակամիջոցը արդեն լրացած էր այս տարւայ ամառւայ ամիսներին եւ որ հետեւապէս պէտք է նոր ընտրութիւններ լինեն:

Ստուգելով այդ լուրը՝ ի դիմաց Մուրճի խմբագրութեան յայտնում եմ, որ այդ նիշս չէ. իրաւ է, 1893 թւականին ընտրութիւններ կատարեցին, բայց դոնա բեկանեցին, այնպէս որ այժմեան հոգաբարձութիւնը ոչ թէ 1893 թւականին ընտրւածն է, այլ 1894 թւականին ընտրւածը. հետեւապէս ներկայ հոգաբարձութեան 4-ամեայ ծառայութիւնը պիտի լրանայ միայն 1898 թւականի ամրանը:

Խմբագիր Մուրճ ամսագրի

Ա. ՕՐԱՍԽԱՆԵԱՆՑ

——

Խառն լուրեր

Ռուսիան, Եապոնիան և Միացեալ-Նահանգները ընդունել են Կորէայի թագաւորի կայսր տիտղոս տալը, որի դէմ Չինաստանը վճռել է բողոքել:

—Եւրոպական կաբինէտները շուտով կը ճանաչեն Կրետէի խնդիրը վճռելու, համաձայն Ֆրանսիայի առաջարկութեան:

—Յունական կառավարութիւնը իր զօրքերի գլխաւոր հրամանատարի միջոցով յայտնել է Էդհէմ փաշային, որ պատերազմական գործողութիւններ վերջացած են: Միևնոյն ժամանակ տաճկա-յունական սահմանն են հասել լիազօրները Տաճկաստանի և Յունաստանի նոր սահմանները որոշելու համար:

—Կ. Պոլսի ռուսաց նոր դեսպան Ի. Ա. Զինովիևը իր պաշտօնատեղին կը մեկնի նոյեմբերի սկզբներին:

—Լրագիրները հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ տաճիկների այն զօրաբաժինը, որ դտնւում է Փոքր-Ասիայում, ռուսաց սահմանի մօտ, անյապաղ կը դնի Մաուզերի նոր ձևի հրացաններով: Նաև Թուրը պատւիրել է Գերմանիայում նոր զէնքեր և նաւեր:

—Ներկայումս Հեսսէն-Դարմշտադտումն են գտնւում Ն. Կ. Մեծութիւններ՝ Թագաւոր Կայսրը և Կայսրուհին: Գերմանիայի կայսրը և պետական կանցլերը այցելեցին կայսրին: Հոկտ. 14-ին կայսրը ընդունեց Ձերնոգորիայի իշխանին Դարմշտադտում:

— Յոյն-տաճկական դաշնագրութեան բոլոր յօդւածները վերջնականապէս ընդունւած են, բացի այն յօդւածից, որ վերաբերում է հիւպատոսական պայմանադրութեան: Տաճկաց պատգամաւորները այս առիթով յունական պատգամաւորների հայեացքներին համակիր չեն. ուստի նրանք դիմել են դեսպաններին ծանօթ տարաձայնութիւնների մասին խորհրդակցելու:

—Սուլթանը, ինչպէս յայտնի է, ընդունել էր տալու Կրէտէին ինքնավարութիւն, բայց այժմ նա պետութիւններին պատասխանել է, թէ նա համաձայնւեց ինքնավարութիւն տալու դեռ պատերազմը չէղած (յոյն-տաճկական), կամենալով արիւնհեղութիւնների առաջն առնել: Թուրը համաձայնւում է տալ ինքնավարութիւն միայն հետևեալ պայմաններով. 1.) կղզում կարգը պէտք է վերականգնեն տաճիկ զօրքերը. դրանք կարող են լինել եւրոպական գեներալի հրամանատարութեան տակ, բայց պէտք է լինին տաճկահպատակ, իսկ եթէ չէ, պէտք է տաճկահպատակ կութիւն ընդունեն 2) ընդհանուր նահանգապետը կարող է քրիստոնեայ լինել, բայց պէտք է տաճկահպատակ լինի և կ'ընտրւի պետութիւնների Դրան հետ առաջուց կայացած համաձայնութեամբ. 3) եթէ փոփոխութիւն մտցնւի Հալէպոյի 1836 թւի պայմանագրութեան մէջ, դա պէտք է լինի Դրան համաձայնութեամբ. 4) Թուրը ընդունում է կրէտացիների օգտին եղած զիջումները, որ տրւած են Հալէպոյի պայմանագրութիւնից յետոյ և որոնց զօրութեամբ մաքսային տուրքերը նրանց են հասցնում, իսկ նրանց տասանորդը Դրանն է վճարւում:

Պետութիւնները սուլթանի այս նոր քաղաքակութիւնից չանկարծակի եկած՝ պատասխանեցին թէ իրանք զբաղւած են Կրէտէի խնդրով և նրա համար նոր ծրագիր է մշակում Ֆրանսիական արտ. գործ, մինիստր Հանոտոն:

Թէ ինչ է լինելու անթիւ անգամ ծրագիրներ մշակելու վերջը, այդ մնում է մթութեան մէջ: Տաճկաստանը սիրտ առած Գերմանիայի աջակցութիւնից՝ յոյս ունի կրէտական խնդրում էլ յաղթութիւն տանել:

——

մեր պատկերները

Երիվով բաղարջ եւ Մեռեալ ծովը.

Մեռեալ ծովի մի մասն է պատկերացնում *Տարազի* ներկայ № ում տպագրւածը նկարը: Յիսուս իր հառաջիկայ փորձութիւնը կատարեց այդ ծովի եզերից բարձրացած լեռան վրայ, որի հարաւային ստորոտումն ըստ աւանդութեան, Բաբելոնի աւազակը եւ Սոդոմ ու Գոմոր բաղաքներն են եղել:

Մեռեալ ծովը 30% աղ է պարունակում իր մէջ եւ այդ պատճառով նրա մէջ ոչ մի ճկյաւոր կենդանի ապրել չէ կարողանում: Մեռեալ ծովից երեւում է Մօաւէացի լեռը, որեղից Մովսէս մարգարէին երեւաց աւետեաց երկիրը: Լեռան ձախ կողմը Յորդանանի հովիտն է:

—

Այլ եւ այլ

Թայնի ձանապարհորդ Նորվեգիացի Նանսեն Հիւսիսային բեւեռում առած յաջողութեան մասին տպագրած յօդուածներից, դասախօսութիւններից, հեռագիրներից ստացել է վարձ մի մլիոն հարիւր հազար ֆրանկ:

Անցեալ սեպտեմբերին Թիֆլիսի սպանդանոցում մորթել են 5726 եզ, 466 հորթ, 59 խոզ, 15346 ոչխար: Ախտս որ չի կարելի հաշուել, թէ քանի հարիւրհազար բաժակ օղի եւ գինի էլ է խմել Թիֆլիսը մի ամսուայ ընթացքում: Սակայն կարելի է հաշուել թէ քանի գրոշ ողորմութիւն է տուել խղճածին եւ ծարաւին, եւ այդ այնքան անելիքան է, որ ամաչում ենք, արձանագրել:

Մոսկուայի քաղ. խորհուրդին 30,000 հոգի բաղդ են տուել, խնդրելով, որ ցեխ օրերին արգելուին կառքերի անիւները հագցնել ռեզինով, որը սասսիկ շրջում է ցեխը անցորդին: Հետաքրքիր է, թէ ինչ վճիռ կը տամիոսկայի բուրժուաները այդ իրաւացի պահանջին:

ՍՈՒՐՀ ԱՆԳԱԿ

Բագու. Գ. Ե. Ընդդէմ ենք տաքաթական հէնց երէմ անգամ հրատարակենք, սակայն ինչո՞վ եւ ո՞րի յոյսով: Ձեռ ուղիղ էֆ նկատում, որ Բագուում հայոց տուաջին ներկայացումը բայւեց *Հոգուվ Աղջաններ կամ հայ ինթելիգենցիա* պիէսով: Երանի զգար ինքն հայ ինտելիգենցիան իր առդի դրութիւնը եւ թէ որ աստիճան բարձրութեան վրայ լինելը: Խրախուսական իոսքերով գործ չի կատարւում: Անցեալ դառն փորձերը բաւական խրատական են...

Ալէքսանդրապոլ. Եր. Մ.: Ձեռ ենք ցաւում, որ անզօր ենք ձեր ինդիրը կատարել: Սնոցի յոյսերով էլ չենք կարող ձեզ զոհացնել: Նախ վերականգնեցէք ձեր առողջութիւնը եւ ապա եղէք մի հատ տուս գործի: Հայ գրականութեան բացառապէս նուիրելը կրզցի ձեզ տանջանքի, զրկանքի անյատակ անդունդը:

Ն. Նախիջեւան. օր. Մ. Ճ.: Հայկովսկու Եր. Օպեր. օպերայի լիբրեստոն դեռ այս տարի է թարգմանուել իտալերէնի եւ Պետերբուրգում դիտաւորութիւն ունի իտալական խումբը ներկայացնել. *Թաթիսթիի-Օնեգին, Մազիլի-Լհնակի. Տատիանի* պարտիան շնորհալի *Զիմբրիխը* պիտի երգէր, բայց նա դեռ մի վեց ամիս էլ է մնալու Միացեալ-Նահանգներում:

Հիքրետտօ

ՄՈՐԳԱՐԷ

օպերա, 5 գործ. 9 պատկ.

I գործ Կոմսի ամրոցը եւ ագարակը Հոյանդիայում. Գիւղացիները երեք աճաբապտիսցների ուղեկցութեամբ գնում են կոմս Օբերտալի (Զադօլսկի) ամրոցը կործանելու: Սրանց մէջը են Բերտա (Սարտօրի) կոմսի ստրկուհին և Փիդես (Կարամզինա-Փուկովսկայա), Բերտալի փեսացու Յովնանի (Պերէս) մայրը:

Կոմսը լսելով խուժանի աղմուկը իր թիկնապահներով և զինուորներով ամրոցից դուրս է գալիս՝ ցրել հրամայելով ամբոխին: Սրանց մէջ նկատելով Բերտային Փիդեսի հետ, հարցնում է նրանց այստեղ լինելու պատճառը: Ստրկուհին դողդոջուն ձայնով, աղերսում է Թագաւորիչն սիրել իր փեսացու Յովնանին, որ մի անգամ գետից հանեց նրան և ազատեց խեղդւելուց: Կոմսը հրամայում է թիկնապահներին բռնել Բերտային և ամրոց տանել, աւելացնելով, որ նրա գեղեցկութիւնը վայել է աւելի լաւ վիճակի, անշուշտ հէնց իր կոմսի անասնական կրքերին:

Տարազի ներկայ №-ում տպագրւած պատկերը ներկայացնում է այն մոմենտը, երբ Բերտան ծնկաչոք գութ է հայցում: Նրա եաև Փիդեսը սարսափած սպասում է իր գաւռավճռին, իսկ կոմսի թիկնապահները քաշում են Բերտային ամրոց:

II գործ. Լէյդեն քաղաքի մօտ Յովնանի եւ մօր պանդոկն է: Գիւղացիները և զինուորները հաւաքւել են այստեղ գարեջուր խմելու: Այստեղ են և երեք քարոզիչները, որոնք Յովնանի պատկերը շատ նման գտնելով իրանց նախկին և ժողովրդից աստւածեալ հերոսի պատկերին, խորհրդակցում են իրանց մէջ օգուտ քաղել այդ գուգադիպութիւնից և հրաչակել Յովնանին մարգարէ և իրանց դիտաւորութիւնը՝ ժողովրդական ապստամբութիւնը ապահովւած կըլինի:

Յովնանը քարոզիչներին պատմում է իր երազը: Նա տեսնում է իրան փառահեղ մեծ տաճարի մէջ, բարձր կամարի տակ, թագը գլխին, ժողովուրդը իր առաջ ծունր դնելիս: Եւ յանկարծ պատի վրայ նշմարւում է հրեղէն տառերով գրած կըխորտակւես եւ դու, կըխորտակւես:

Քարոզիչները մեկնում են երազը, ասելով, երկինքը կանչում է Յովնանին վրէժ առնել բռնակալից. քաղցր հայրենիքը և ժողովուրդն ազատել գերութիւնից, նստել գահ, դնել թագ. ու հրաւիրում են Յովնանին հետևել իրանց:

Այդ ժամանակ Բերտան մտնում է սարսափած և աղաչում Յովնանից փրկութիւն: Սրան թագցնում է Յովնանը, բայց երբ գալիս է բռնակալ կոմսը ու պահանջում Բերտային, Յովնանին սպառնալով գլխատել մօրը: Բերում են և Փիդեսին, դահիճները կացիններ նրա գլխին բռնած: Յովնանը մայրական սէրը դերադասում է նշանածից ու Բերտային յանձնում է կոմսին: Ազատւած Փիդեսը օրհնում է զաւակին, որ տկրութեամբ լի, հարցնում է քարոզիչներին, թէ ճշմարիտ երկինքը կանչում է իրան վրէժառնել բռնակալից, փշրել ստրկութեան անարգ լուծը և սպասում է իրան թագ և փառք: Դրական պատասխան առնելով, Յովնանը յայտնում է, որ վարձատրւած կըլինի, եթէ Բերտայի սիրոյն իր ժողովուրդն ու երկիրը փրկէ, պէտք չունի թագի ու գահի: Այդ վայրկեանից իսկ նա հետևում է աճապտիսցներին:

III գործ. 1 պատ. աճապտիսցների բանակը աճատւում: Յովնանը մարգարէի հռչակ է ստացել: Գիւղացիք ամեն կողմից խմբւում են այստեղ, կանայք պաշար են բերում ժողովրդական պատերազմի զինուորների համար: Քարոզիչները խրախուսում են ժողովրդի ապստամբութիւնը:

Հայէտ:

2 պատ. Քարոզիչ Զաքարէի վրանը: Լսելով, որ կոմս Օբերտալ-հայրը պատսում է օգնութեան, Զաքարէն կարգադրում է հէնց գիշերով յարձակումը սկսել, Այդ միջոցին բերում են Օբերտալի որդուն, որ պանդուխտի հագուստով ապստանարան է եղել որոնելիս: Յովնանը սրան ճանաչում է, թոյլ չէ տալիս զինուորներին նրան սպանել, այլ հրամայում է պահել և Բերտային յանձնել, որ նա իր ուզածին պէս պատժի սրան: Ինքը Յովնանն էլ կամենում է մօրը այցի գնալ, սակայն քարոզիչներն արգելք են լինում նրան ու մղում դէպի արշաւանք:

3 պատկեր. Աճապտիսցների բանակը: Զօրքը կշտամբում է Յովնանին, որ նրանց անհաւատար կուի մէջն է գցել և ջարդել, ապստամբել են կամենում նրա դէմ: Յովնանը քարոզիչ Զաքարեի խարդաւանքն համարելով այդ, նախատում է նրան, իսկ զօրքին խրախուսում և երդւեցնում իրան հնազանդ լինել, ասելով, որ երկինքը խոստանում է յաղթութիւն պարգևել:

IV գործ. 1 պատ. Միւնստր քաղաքի հրապարակը: Ժողովուրդը սպասում է հրաշագործ Յովնանին, որ պիտի

իր բնակութիւնն այստեղ հաստատէ: Մի պառաւ մուրացիկ կին ողորմութիւն է հայցում, ողբալով իր մեռած Յովնան որդուն: Բերտաև կուսակրօնի հագուստով գալիս է և ճանաչում մուրացող պառաւին Փիդիս ն, որից իմանում է, թէ իր սիրեցեալ Յովնաը մեռած է: Մարգարէին նա պէտք է եղել, մեռցրել տարել է նրան: Բերտայի յուսահատութեանը չափ չկայ, նա վրէժխնդիր է կամենում լինել մարգարէից, որ արեամբ ողողել է աշխարհը: Աղօթում է և այժ հայցում իր թոյլ բազուկներին, որ կարողանայ մարգարէին մորթել:

2 պատկ. Արեւելեան սահմերը Միւնստրում. հանդիսաւոր բագադրութիւնն է Յովնաանին: Քարոզչներին հաւատացած, ժողովուրդը երկնքից իջած է համարում Յովնաանին: Փառահեղ թափորը սրահներով անցնում է գնում տաճար: Փիդեսը ճանաչում է որդուն, սակայն զաւակը ուրանում է մօրը: Զրպարտիչ պառաւին տեղնուտեղը սպանել են կամենում, սակայն Յովնաանը արդելում է, հրամայելով պառաւին այքերը լաւ բանալ: Դրաշք է կատարուում. պառաւը սթափւում է և հերքում, որ Յովնաանը իր տղան է:

V գործ. 1 պատ Միւնստերի պալատի նկուղում: Քարոզի Զաքարեն հաղորդում է ընկերներին, որ կայսեր բանակը մօտենում է և ցոյց է տալիս նրա ինքնագիր նամակը, որով ներումն է խոստանում իրանց, միայն թէ Յովնաանին բռնեն: Վճռում են գլուխները ազատելու համար Յովնաանին թշնամու ձեռք ձգել:

Զինուորները բերում են բանտարկում այստեղ Փիդեսին: Սա մի կերպ հասկացնել է կամենում Յովնաանին, որ իր հարսնացու. Բերտաև վճռել է սպանել մարգարէին: Գալիս է և ինքը Յովնաանը մօրն այցի, սակայն սա չէ ընդունում զաւակին, կշտամբում է նրան սուտ մարգարէ հռչակելուն, մօրն ուրանալուն, երկիրն արեան մէջ ողողելուն համար:

Ծնկաչոք գութ է հայցում Յովնաանը մօրից, որը խոստանում է կրկին անանձնել նրան իր զաւակ, եթէ հրաժարւի կախից և արիւն թափելուց: Խոստանում է Յովնաանը, մայրական սէրը գերադասելով սնոտի փառքից:

Բերտաև վճռած լինելով սպանել մարգարէին, որ իր Յովնաան փեսացուին մահացրել է, գալիս է այս նկուղը, ուր թագցուած են վառօդի պահեստները: Այդ գաղտնիքը նա իմացել է իր պապից, բայց չնկարծ հանդիպելով այստեղ Փիդեսին եւ Յովնաանին, ուրաթիւնից աղաղակում է և համոզում փախչել: Բայց Յովնաանի գուժաբեր թիկնապահը մտնում է յայտնում—անաբապտիստների դաւադրութիւնը և սպառնացող վտանգը: Բերտաև տեղեկանալով, որ մարգարէն հէնց ինքը Յովնաանն է, անիծում է նրան այդպիսի սրբապղծութեան՝ իրան մարգարէ հռչակելու և ձեռները այդքան գոհերի արեան մէջ ողողելուն համար: Յովնաանը չէ կարողանում հաւատացնել, որ այդ բոլորը Բերտայի սիրոյն և իր ժողովրդի բարեկեցութեան համար է արել: Սակայն Բերտաև դեռ սիրում է Յովնաանին, բայց նրա այդքան թափած արիւնը բաժանում է միմեանցից և դաշնակցում լինելով սպանում է ինքն իրան:

2 պատկեր. Միւնստրի պալատը.

Յովնաանը վճռել է դաւադրողներին, երկրի մեծամեծներին իր հետ միատեղ ոչնչացնել: Բերտայի մահից յետոյ կեանքն էլ պէտք չէ նրան մանաւանդ ու հէնց այդ դաւադրողները իր բարոյական անկման պատճառ եղան: Եւ ահա հանդիսաւոր խնճոյքին, երբ քարոզիչ Զաքարեն Օբերտալի հետ գալիս են Յովնաանին բռնելու, բարձրանում է նկուղիներից բոցը ու մի քանի րոպէի մէջ ճարակում է ամբողջ պալատը, որ գալիս, տակը թողնելով թէ Յովնաանին իւրայիններով և թէ դաւաճաններին:

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ եւ վաճառւում է

ՆՈՐ ՓՈՐՁ

Գրականական և հասարակական հանդիսի առաջին գիրքը հետևեալ բովանդակութեամբ.

1)*Առաջաբանի փոխարէն*:—2) Ա. Ադելեան. *Ձար չկայ (ուսուցչի յիշատակարանից)*:—3) Յովհաննէս Զահնազարեան. *Անմեղ գոհեր (կանայք Գ. Զուբարի գրածքներում)*:—4) Ա. Լազարեանց. *Ձեռագիր (վեպիկ Ժ. Նորմանից)*:—5) Յովհ. Գնունի. *Ինչ է կեանքը իր ազգին Ա. Պուշկինը (ընդհանրական տեսութիւն)*:—6)Արտաշես. *Մարդ թեանաուսն (Մարսել Պրևոյի „Lettres de femmes“-ը)*:—7)Որ. Կատարինէ Ներսէսեանց. *Խղճացեք (վեպիկ—Մարսել Պրևոյից)*:—8) Ստ. Գրիգորեան. *Մի ուղղութիւն գեղարուեստական կրիտիկայի մէջ (Ի. Իւանովից)*—9) Մելիք-Իով. *Տուրգենեւի Առաջ գանազատեղծութիւնները պ. Ալ. Ծատուրեանի թարգմանութեամբ*:—10) *Խմբագրութեան կողմից*:—*Հայտարարութիւններ*:

Իւրաքանչիւր օրինակի գինն է ամենայն տեղ 75 կոպ.

Москва, Больш. Дмитровка д. Живаго кв. № 2.
Ивану Шахъ-Назарянъ
Յովհաննէս Զահնազարեան: 2—3

Ամենայայնի գործարաններից

ՈՒՅԵԱԼՆԵՐ

ԴԱՉՆԱՄՈՒՐՆԵՐ

Փիսգարմոնիներ, ջութակներ, բառ-կիներ, ֆլեյտներ, կլարնետներ, մայնախազեր, չարեր եւ այլն եւ այլն

Ամեն տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս:

Նոր-պրէյսկուրանտներ ուղարկուում են ձրի:

Երաժշտական գործիքների եւ մայնախազերի Կովկասեան կենդրոնական

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆի

Музыкальное депо

Ե. Ա. ՄԱՐԱՄԱՆՑԻՑ

Тифлисъ, Дворцовая у.л.

ԲԺԻՇԿ Տ. Պ. ԼԱԶԱՐԵԱՆ

Նախկին ասիստէնտ Մոսկուայի քաղաքային մանկական հիւանդանոցի յատնուն Ս. Վլադիմիրի:

Ընդունում է ԵՐԵԽԱՆԵՐԻ հիւանդութիւններ առաւօտը 10—12 ժամը. և երեկոյեան 5—6 ժամը: Սոլոլակ Սադովայա փ., տ. Քալանթարովի № 50.

5—3

Բազում բնակուող մի հայ բնտանիք որոնում է Թիֆլիսի ԴԱՍՏԻՐԱԿՈՒՀԻ: Պայմանները տեղեկանալ Տարազի խմբագրատնից:

3—3

Допущено цензурою. Тифлисъ, 18 октября 1897 г. Տպարան Ց. Մարտիրոսեանց. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., №2—1.